

ԽԵՐԱՔՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱԴ ԱՅԱՀԱՔՐՈՒ

Յաւօք սրտի անսնելով «Մշակ», օրագրի «Կրօնի», Ազգութեան եւ խղճի ազատութեան, անուններով գլորած ձուի վնասակար հետեւանքն, որեւ գտաւ թէ իւր արձագանքն եւ թէ զօրեղ հակագարձ պատասխաններն «Մեղուի» մէջ՝ բայց Հայ աղջութեան եւ կրօնի միութեան հարցն տակաւին բռնորովին պարզուած չլինելով, կամենումեմ սոյն յօդուածով պարզել ըստ կարի, ուստի խնդրեմ տեղի շնորհել պատուական Ամսագրոյդ մէջ:

### ՀՈՅ ԱԶԳԻ ԵՒ ՀՈՅ ԵԿԵՂԵՑԻ.

\* Մշակ «իբրև բերան Հայ բողոքականաց և զրիւ լուտերական պ. Ամիրխանեանցի, զլորեց այդ ձուն, թէպէտ ստացաւ իւր պատասխանն լիովին, և մեք ընթերցողներս սպասումէինք կարդալ «Մշակի» մէջ սղնաւարար յետ կոչել իւր ձուն, տեսնելով նորա մէջ երբեմն «Մասինց» արտասպած «Մշակի» և բողոքականաց հակառակի յօդուածներ — Հայ բողոքականաց և միսիօնարտաց Հայ աղջութեան և կրօնի արած վասաւց կատարեալ պատկերներ ու ապացոյներ, բայց նա, մէծ. պ. Գ. Արծրունին կրկն թշլ տուեց իրան Շամախինցի Հայ բողոքականաց և պ. Ամիրխանեանցի Ժիզուիթութեանց բերան գառնալ. թերեւ միմիայն «Մեղուին» հակառակելու և պատասխաններու մտօք, բայց առաջ մածուն սպիտակ է, իմ մածուն սկ է. թէ քո մածուն սկ լինի. իմը կը սպիտակի:

Մեք չեմք թերահաւատում պ. Արծրունու Հայասիրութեան և աղջասիրութեան վերայ, բայց թէ, նա Հայ կրօնի սկզբունքն ու Ճշմարտութիւն ճանաչումք թէ, ոչ տակաւին հարց է, ինքն կամ արագայն պիտի պարզէ, մեք զիտեմք որ նա, պ. Արծրունին թէպէտ գառնոյ այս կամ այն աղանդի հեղինակ անդամ։ թէպէտ գտնուի Զինաստանում։ կամ Եւրոպայում։ կամ Հայաստանում։ միևնոյն Հայասիրութեան ողին կառնենայ և պարձանք կը համարի իրան Հայ անունը (ոչ Հայ կրօն)։ բայց բնաւ չի երաշխաւորի որեւից Ամիրխանեանցի կամ Շամախինցի Հայ բողոքականի նայն Հայութեան ողին ունենալու և Հայ անսւն կրելու ցանկաւթեանը թէպէտ նորա ժամանակից օգուտ քաղլիլու համար հագել են Հայ անուն իբրև Դե-ՄԱԿ։ նորանով գրսեր անելու համար։

Պ. Արծրունին լինելով միայն քաղոքագէտ, լեզուագէտ և շնոր ու մամանց զէտ, բայց ոչ բնաւ պատմագէտ և կրօնագէտ, ընկաւ պ. Ամիրխանեանցի սարբած ոստայնի մէջ, ձեւն ու ոտն իսձնեւեցան, սկսաւ աշղի վերջին նէնէր նէնէր երգել, թերեւ Հայասիրութիւն թոյլ տուեց «Մշակին» հաւատալ Հայ լեզուով խօսով Ժիզութիւն, չմտարերելով որ, իւր Հայասիրութիւնց աւելի կրօնասէր փանատիկոս էր պ. Ամիրխանեանցի, չիմանա-

ԸՆԴ որ, ամենաքաղցի զինին երբ քացախի, ամենասասարկ է լինում։ Հայ կրօնից դուրս եկածը սարսափելի թշնամի և դառնում իւր թողած կրօնին և աղջութեան։ Օրինակներ շատ կան, մեք բաւականանք Վահակով, Մեհրուժանով, Պայեաճեանով, Հասունով, Միմոնիկով, Ամիրխանեանցը զերմաներէն լեզուա խօսէր, զուցէ պ. Արծրունին չհամակրէր նօրան և հակակրէր։ Ամիրխանեանցն այս միմայն Հայ լեզուաւ և Հայ զիմակով իւր թակարզի մէջ որսաց աղատամիտ։ Հայասէր Արծրունուն։

Պ. Ամիրխանեանցը կարդալով «Մշակի» մէջ տուած «խենթ» վէպի հերոս Վարդանի երազը, «200 տարուց յետոյ Հայեր լուտերականացած» վութաց կարձիլ 200 տարին, փութացնելով նոյն երազի իրազործումը։ Հագաւ Հայ անուն իրբեւ զիմակ, մի քանի կոպէկ տուից Հայ սովատանջնեներին (առելի իւրայնոց ինչպէս արին միսիօնարներն, յորդորեց իւրայինք, որ իրբեւ միութեան նշան՝ չետևեն իրան, այնու համակրութիւն զտնեն Հայ ամբողջութիւնից, և աղատ մտնեն Հայ արտերի մէջ, ցանածի վերայ կրկին ցանեն որոմն \*).

ՄԵՆՔ չեմք ներում մեզ մտնել կրօնական և Աստուածաբանական խընդիրների մէջ, արդէն 1800 տարուց ի վեր Հայ եկեղեցու ուղղափառութիւնը յայտնի է իւր անցեալով ու ներկայով, թէպէտ պ. Ամիրխանեանցը ցանկանումէ և հրաւիրումէ նոյն հարցին. մենք կաշխատենք ցոյց տալ, որ իւր զիմակն այսինքն, Հայ անունը յայտնել է մեզ իւր հազնողի ներքին գոյնեն ու նպատակը, մեք կաշխատենք ապացուցանել, որ առանց Հայ աղջութեան Հայ կրօն և եկեղեցի չկայ, և առանց Հայ կրօնի և Հայ եկեղեցու Հայ աղջութիւն չկայ և չի կարող լինել, կաշխատենք ցոյց տալ որ, եթէ երկրագնդի վերայ ման միայն երկու անձինք Հայ կրօնի ու եկեղեցու անզոմ, այն երկու անձինքն միայն կազմում են Հայ աղջութիւն։ Ապացուցանենք մեք ասածը, թող լսեն պ. պ. Արծրունին և Ամիրխանեանցը, թող խղճմուանք դատեն ընթերցողներ, և իրանց վճիռն յայտնեն «Մշակին»։

Հայ աղջն և Հայ եկեղեցին միմեանց առնչակից են, այսինքն, այնպիսի տարբեր գոյաթիւններ, որ մին առանց միւսի չի կարող լինել, Հայ աղջն և Հայ եկեղեցին այնպէս միացել են, այնպէս խառնւել ու զանգւել, տարբացել են, որ անկարելի և անչնար է եղել որոշել, սկսած այն օրից, երբ ստացաւ Քրիստոնէութիւն։ 19 դարուց իվեր եղել է մի խմոր, մի զանգւած, մի մարմին, այնպէս որ Հայ ասելն նշանակումէ Հայ եկեղեցու

\* Ամիրխանեանցի գաղանի նաւակների վերայ յետոյ պատեհութիւն կունենանք խօսելու, որ գրելու է Վաղարշապատ, Տ. Մ. Ի. և Վ. ա. գերքիկ պահ

անդամ, և Հայ եկեղեցի տաելն, նշանակումն Հայ ազգ, Հայ Հայ որ ունի դամ չմնի Հայ եկեղեցու, Հայ Հայ եկեղեցու անդամ, որ Հայ չմնի Հայ եկեղեցուց զարս Հայ ազգութիւն Հայ Հայ ազգից զարս Հայ եկեղեցի Հայ, թէսէտ ազգն ու կրօնն ունին իւրեանց ու անձին նշանաբաններն, առանձին յատկութիւններ, լեզու, զպրաթիւն, հայրենիք, ծէս Հայ ազգութիւն և Հայ կրօն բաղկացրել են մի գյուղթիւն ինչպէս առաջ և ջուր բաղկացրել են քար, եղբ փշի քարն, դատնայ, աւազ, այլ և քար անունը կորցնումէ, և առանց զի կրկն չի դառնում քար, Աւելի բացպայտ օրինակ — մարմին և հօգիս որ ունին առանձին յատկութիւններ, միացել, եղել են մարզ երբ բաժանն են, այլ ևս հօգին չի կոչում մարզ, Այս օրիշնակս թող խորթ և զժուար չժուի ընթերցողին. Հայ ազգը Քրիստոնէութիւնը հայույ պէս է միացրել իւր գյուղ մեման հետ, ինչպէս վերև ասացինք, « թէ Հայ ազգութիւնն հետպէտէ սպառի զանազան տարրերի մեջ խառնուելով և ման միայն երկու անձինք, այն երկու անձինքը պիտի կազմեն Հայ ազգութիւն, ինչպէս կազմեցաւ մէկից և իւր հետ միացրեց շատ տարրեր, ազգաւ լեռուով և կրօնիւ, Հայաստանի բնիկ ազգերց շատերը միացան Հայէի հետ, կոչեցան Հայ, յետոյ Արծրունիք, Բագրատունիք, Մամիկոնեանք և այլ տարրեր, հետպէտէ կրօնիւ, լեզուով և անունով միացան Հայոց հետ, միայն պատմական անուն էին պահում, ինչպէս այժմ ևս կան Բագրատունի, Մամիկոնեան, Արծրունի անուն կրողներ, որ Հայ են, թէ սխալ է օրինակս, թող պ, Գրիգոր Արծրունին յայտնէ թէ, ինքն Ասորու ծագում ունելով, Ասորի է լեզուով, կրոնիւ կամ որ և իցէ Ասորի յատկութեամբ, Բնական օրէնք և, փաքրը մէծ կորչումէ, մի կամիլ ջուրը մի կարաս զինւոյ մէջ ածելով, թէպէտ չի ուշանում, բայց էլ ջուր չի կոչում, այլ զինի. նայն օրինակաւ և մի կոթիլ զինին, զրի մէջ, բայց փոքրը թէ ունի բնական կամ աբու եստական նէրքէնէն զօրութիւն, ինչպէս ազեր և զօրներ, մեծամասն զրի մէջ պահում են իւրեանց զօրութիւնը լուծւելով հանգերձ, Հայ ազգ իւր ներդ գործիւ զօրութիւն ունելով կրօնը, երբ կորցրել չէ զայն, թէ բնակուծ լինի եւրոպակամ կամ անքաղաքակիրթ ազգերից, մինչդեռ պահում իւր կրօնն — իւր ներդ գործիւ զօրութիւնն, նա Հայ է, և Հայ անունով և պարծում ազգանունը կրօնի անունով, և կրօնի անունը անունով ազգի անունով փոխազարձ ընդունելով իւր վերայ, Վերջապէս իւրաքանչիւր Հայ անհատ, երբ ունի Հայ եկեղեցու հաւատն ու նորա կրօնի ծէսը, նա ուր լինի, Հայ է և Հայ անունով է պարծում, Ընդ հակառակն՝ երբ կորցնէ իւր ներդործիւ զօրութիւնը — կրօնը, թէպէտ բնական լինի, Հայաստանի կետրունում, զիտենայ միմիայն Հայ լեզու, շրջապատպծ լինի իւր համազգիներից միայն, նա այն ժամանակ ամօթէ համարում իրան՝ Հայ անուն կրելն, այլ բաղադրիչն կամ

կամ ուստի, անուներով է մկրտած զինքն Պարտաւորուում անել այդ, ինչ ազգի կրօն որ ընդունել է, այն ազգի շահն ոյն է պահանջում, ինչ ազգի ներդործիւ զօրութիւն որ ստացել է, նոյն ազգի ամբողջութեան պիտի հետեւ, ինչպէս վերև ասացիք Հայ տարրի հետ միացած Արծրունեաց, Բազրամառնեաց և Մամիկոնեանց համար նոյն է և Հայ կրօնից բաժանւած և ուրիշի կրօն ստացող Հայու համար Թէկովէտ կան սակաւ բացառութիւնը, բայց բայցառութիւնը ընդհանուր կան չեն, մասնաւորից ընդհանուրը չի ճենաբարկում և Հակահանունեան Կաթոլիկէներ, Միսիոնարեան Հայուներ, զմոցէ և պ. Արծրունին և Մելիքզագէն պատկանին այս բացառութեան (<sup>4</sup>):

Հայ ոսկի զարու մատենազմութիւնք յայտնի ապացոյց են Հայ եկեղեցու և ազգութեան առնչակցութեան, Արզան և իրայինքն երբ առ երեսս ընդունեցին մագոց օքէնքը, Հայ ազգը նորանց իրեւ ազգութեան և կրօնի թշնամի ճանաչեց երդմամբ ուխտեց եղբօր ձեռքը բարձրանայ իւր հարազատ եղբօր վերաբ, եթէ նա ուրացել է Աստուծոյ պատու իրանը, Հայը շինայէ որդուն և որդին հօր պատին, կինը կռուի իւր ամուսնու հետո ծառացն իւր տիրոջ հետ (Եղիշէ), եթէ պ. Արծրունին պատմազէտ լինէր, Հայոց եկեղեցու անցեալը մի անգամ աչքէ անցուցանէր, կամ բարեհաճէր զանէ հիմայ կարգու Եղիշէի պատմութիւնը ընաւ և ընաւ չէր համազի պ. Ամբոխաննեանցի ազգակործան խօրհրդոց, պիտի սիրէր նորան իրեւ մարդ, և ատէր իրեւ վեասակար թշնամի Հայ կրօնի և ազգի, Մեր չեմք քարոզում մոլես անդութիւն — վանատիկորութիւն, Հայ եկեղեցին խալազատէր է, և այս խալազասիրութիւնը նորան իրեւ բնաւորութիւն և բնութիւն է դարձել, բնաւ չի հալածել և չի հալածում ոչ մի կրօնի անդամնց, թէկէտ միշտ հալածանք է կրել, միշտ նախատւել է ծաղր է եղել թէ օտարներից և թէ իրանից բաժանուած փոքրամասնութիւնից, մինչև իսկ այժմ ըստ Մշակի զբաժին, Ծփիրսու մէջ անգամ յանդնումնեն ծաղրել Հայ եկեղեցու ծէսը, իրանից բաժանուած Հայէրն \*), Հայ եկեղեցին միայն խօսքով և իշարկին զէնքով և վահանով պաշտպանել է զմոքն, որով պահել է իւր զոյսւթիւն մինչ ցայժմ և նոյնպէս պիտի պաշտպանէ մինչ ցվերջ և պահէ իւր գոյսւթիւնն:

Հայ եկեղեցին չէ ունեցել և չունի միսիօնարներ, և որսացող թակարգութիւններ, աւելի պարզն, այլոց ցանած մաքուր ցորենի վերաբ որոնեցաներ, Հայ եկեղեցին բաւականանամեկ միայն Հայ ազգով, չէ ձգում ուղղակի և անաւղղակի բանութեամբ ուրիշ ազգերից անզամներ յափլշակել, միայն աշխատումէ պաշտպանել իւր անդամներին յայտնի որսարդներից կամ ոչխարազեստ զայլերից, Հայ եկեղեցու ց ոչ մի ազանդի հե-

(\*) Թող աիծ պ. Արծրունին, պ. իւր ունք շինհը ուշք հանեց:

զինակ գուրծ չէ եկել մինչ ցարդ ոչ (մի ազգից իւր աղանդին հետեւնելու ձիք թափած չէ լայց օտար եկեղեցուց վիճած և օւտերականի աղանդին հետեւն և այս անուն կրօղ Ամբրիանեանցներ ունեցել է և այս եկեղեցին և ազգը սիրում ամեն ազգին իրուք մարդկութեան անդամ իսկ իւր աղանդին և կրօնակցին սիրում իրուք իւր մարմոց մասն և իրուք իւր ընտառնեաց անդամ և այս եկեղեցին կղերական չէ ազատ ժաղավարական է աղանդին է զայն պաշտպանելու ամեն անհատի պարտքն է և իրաւունքը իրուք ազգային իրաւունքը վասն զի և այս կրօն և ազգութիւն մի զայն թիւն է եկել և մի մարմին իւր առնչունեցութեամբ և այս կապի կամաց մասն աղանդին և ամեն աղանդին աղանդին մի համարածոյ ազգ կազմել մի համայնք սակեղծել և ամրածել կրօնի պատրուակաւ ամեն աղանդին և ամեն տան մէջ խոսվութեան սիրմեր ցանելով միմեանց թշնամի անել և այս եկեղեցին պաշար և ած այս որսորդներից նեղւած մոլոն անդ մահմետականութեան զանազան կիսաբարբարոս ճիւղերից ներքին ոչխարազգեստ զայլերից ուրիշ հաւար և միջոց չկայ ազնանելու այլ միայն ազգայնութեան և կրօնի զանգուածը պինդ պահելով կարող (ենք պաշտպանել մեր սրբագրուած հաստատութիւնը եկեղեցու սեպհականելով) և շիարեն ժեզութիւն իրաւաբաների ճարտարախառնութիւնց այնու վեստել մեր գոյութեան բաժանելու շաղթել Վեզանից բաժանուած հայ զիմակով Ամբրիանեանցներ տակաւին չկարացած վեստել եկեղեցու և ազգի միութեան խմորին պահանջում են Արարի մէջ գերեզմանատուն (անձանձկայթ եկեղեցի) Աշանայ մէջ ազգային ժողովից աւածնորդի քուէարկութեան իրաւունք երբ պ Ամբրիանեանցներ լաջանդի ընդհանրացնել և այս ազգի միութեան առանձին տարրեր մարմիններ ճանաշել առլու գաղափարն այն ժամանակ Աշաղաթավագացի Յրտատարակութիւն Մարտիրոսը պիտի պահանջէ Էջմիածնից Հոփիսուիմէի կամ Պայիքանէի վանքն Ժողովարան անել և այս բոլորականաց Շամախեցիք էլ իւրեանց բաժին պիտի ստունուն Շամախու մէջ Պայաճեանն Տիգրանակեր մէջ Սիմենինին Բաղիշու և Մշու մէջ և ամենքն ի միտուն Ա Ներուսպաղէմի մէջ պահանջներ կունենան իրանց համարելով իրուք հարազատ և օրինաւոր օրդի հայ ազգութեան և ժառանգ նախնեաց հաստատութեանց Ֆեր Մուրատեան վարժարանի հարցը դեռ չընծւած էջմիածնական և Երուսաղէմական հարց պիտի յարուցանեն գուցէ այն ժամանակն անգամ և Մշու բոլորականաց հարցի օրգան գառնայն Մարդ երբ մոլոր ճանապարհի ելքը Նախատեսէ և վտանգը զուշտէ իրան օգուտ պիտի համարի ճանապարհի կիսուց յիտ գառնալ ինչպէս արին Հակահասունեաներից Ելեհաները Միիթարեսն հայրերից ինհանեները որք նախատեսնելով հայութեան ջնջումն իւրեանցից և ճանաշելով որ արտաքոյ հայ եկեղեցու հայութիւն չկայ թօթափեցին իւրեանց ուսերն Պապի թակարդից զիմեցին հայ եկեղեցու ծոց արժան համարեցին

առաջ և առ ոչ երբեմ, թէեւ Պշտկան Ամիրխանեանցիւ որդան չհամակրեց  
ողաքարձիւ, քայլը թէ Պշտկիւ լուսը, պէտք բաց թողունք մեր եկեղեց-  
ցու գուուլը որ Ամիրխանեանցներն ազգա մասն նաև յափշանկեն որդան կա-  
մու Այդանեանկ կրօնեական և խորժի ազգատութիւն ու Արծրունին գուցի  
եւրոպայի մէջ էլ տեսած չէ երբ մի եւստերական մի սիսնոր յաջողի  
Հոռոմի Ա. Թետրոս եկեղեցու մէջ իներկայութեան Պատի քարոզիւ Լու-  
տերական ութիւն, Պատի յարգե խզմիւ և կրօնի ազգատութիւն և լու և երբ  
մի Պատական միմիրնարի յաջողի Խուտաննի Ա. Պաջոս եկեղեցու ամրիանից  
քարոզիւ պատականութիւն Անգլիոյ եղիսկողուներ յարգեն կրանի և  
խզմիւ ազգատութիւն և լու են այն ժամանակն թողի պահանջե Ա. Եչ-  
միածնից որ որ Ամիրխանեանց զայ բացաբանկ քարոզիւ լու ակրա-  
կանութիւն և հայերը յարգելով կրօնի և խզմիւ ազգատութիւն թողի  
առակ իրան այդ անել թէ այդ եկեղու կրօնի և խզմիւ ազգատութիւն Ան-  
րապայում չկայ և պահանջել յանողունաթիւն և ու բեմն Հայ եկեղեցաց  
պահանջելու բալորումին յիմարութիւն է Հայ եկեղեցին իրաւունք չի տուի  
Հայ ազգութիւնից և եկեղեցուց զուրս օտարին մանել իւր ներբեն դորձերի  
մէջ նորու կառավարիչ ընտրելու կամ ընտրելու պաշտօնին մէջ Հայ եկեղե-  
ցու տէտէ և հիւանդ անդամը չի կարող վեարել Հայ եկեղեցուն և ազգին  
ոյնչափ որը ամար ու օտար ու առ ողջը կարել վեասել երբ յանկարծ ներս  
սպրզի Հայ տգետը միայն Յիսուս Քառու կում Եսուուածանի անուն Ընելով և  
երես խաղակնքին վհայ և քրիստոնեայ եմ ասում ու պարձենում և  
այդ երեսու սրբազն անուն պինդ պահելու համար թափու մէ իւր արիւն և  
այս լաւ զիտէ ով Ամիրխանեանցը ուստաի աշխատաւում աշխարհի սիրելի  
կորակ դեղի փոյլումավ որսալ միոյն արծաթասէրներին երազել 200  
տարուց յետոյ Հայ անշարժ եկեղեցու վերանորոգութիւն որպայ այդ  
երազատասին մէք Սաքուղի և Բատղամու աեսակ մարգարեց կարգին Ենք  
զնում Ա. ասն զի մեր եկեղեցին վերանորոգելու պէտք չունի քանայ վասն  
զի ինչ հիման վերոյ կրել և իւր հաւատը անշարժ ու անխախտ մնացել  
և ու պիմեր մնայ մինչ ցվերջ եթէ վերանորոգելու ու պէտք կայ այն էլ  
միայն իրանից բաժանւած ու խախտած քարերի կրկին միութիւնն է 1  
որոնք ուրիշ տղի և կրօնի մէջ մնալով որ ըստ օրէ դէպի օտարութիւն և  
կորուստ պիտի զիմեն Հասունեանների Պայտեանների և Ամիրխանեանց-  
ների նման որոց Մեսիայն որոց վերանորոգին միմիայն Հայ եկեղեցակ  
ծոց զիմեն է Հայ անշարժ անշարժ պահանջան և անշարժ պահանջան  
Պշտկան օդտակար և համարում Հայոց խնզրի պաշտպան և արագական  
լինուլ մի թերթի գոյութիւն գէթ մի տարի մինչ վճռ ի Հայոց յարցնու  
մէք էլ օդտակար ենք համարում մի թերթի գոյութիւն Հայ եկեղեցու  
և ազգութիւն միութիւն պաշտպաննել մինչ Պշտկան լաւ ճանաչէ թէ  
Ամիրխանեանցի ոտարունի մէջն է ընկել և ազնուարար յետ կոչէ իւր  
վեասակար հետեանը կրող ձևն Երարատն իւր թերթերով Անդաւն իւր  
կըներով թող բարեհանին մէք անաջարկան թերթին պաշտօն կատարելով ։

ծառ ոյի հել Հայ եկեղեցու և ազգութեան օդաբն։ Առ այս ժամանակ Մի քանի բառ էլ Կ. պօլոյ Ա. Ներսէս Պատրիարքի վերաբերմանը ։ Մշակի, ՄԻ ՔԱՅԻ, ՅԱՅԻՆ. վերնագրով զլորած ձուին նու իրելով վերջացնու մեմ յօդուածու որ առանց զարան էլ արգէն երկարեցաւ որպէս համար ներողութիւն և՛ խորրոշ ընթերցողներից։

Մշակի մէջ կարգացինք մի քայլ յասած ։ Ներսէս պատրիարքը այցելեց բողոքականաց Թօրերթեան վարժարանին ։ Եթայ յետոյ՝ էլ ի՞նչ ու ոչինչ բայց Մշակի և Ամբրիսանեանցի համար շատ ինչ, ամենայն ինչ, Մելիքզաղէի երազի շնուտափոյթ կատարման նշան։ Ներսէս պատրիարքն իւր քաղաքավարական պարզ այցելութեամբ ընդունեց բողոքականաց յետ միանալուն և եմէ այդ այցելութիւնից հանեռն միութիւն։ Յետն ումէ ազատութիւն տալ բողոքականաց մանել հայ եկեղին ազատորեն որսեր անելու ուրեմն Պարսիկ Խաներն էլ շատ անգամ այցելել են Էջմիածին Միւռոնի օրհնութեան հանդիսին քիւրտ Պատրիան բէզ Խան մաս մահմանաւ բէզ այցելել են Ազթամարտու շատ վաղիքներ յաճախել են Հայոց եկեղեցեաց օծման և զպորոցաց բացման հանդիսին։ Հայոց կաթողիկոսներ և պատրիարքներ ևս փախաղաք այցելել են «Ըմբռնէ վախուն» հանդիսին։ Մզկիթների բացման հանդիսին շատ հաւանել են և պարզեներ առ առել ուրեմն կայացաւ միութիւն վճռեցաւ միակունութիւն։ ազատութիւն այցելուն մի հօտ մի հովին և եմէ ուսումնարանի այցելութիւնը։ Մշակ գարագլուխ համարեց պ. Ամբրիսանեանցը վերանորոգութեան հիմն համարեց իսկ եմէ քուշտորոնի օրհնութեան հանդիսին այցելել Ներսէս պատրիարքն ընդունեց բողոքականութիւն։ բայց մէկ պայ անուան հետ մի զիւակ է սրա պէս զի յաջողի գէմ նորանով խարել պարզամիտներին և որսալ Ներսէս պատրիարքի քաղաքական պարզ այցելութիւնը իրախուսումէ ուսումնականի զպորոցն։ ոչ թէ խրախուսումէ պրորտ ընկերութեան կամ լուսերականութեան միահօնարներին ու որոմնացաներին։ և համոզումէ իրացնինք որ բաց թողուն եկեղեցու զուուը ձգեն վահանն և արթուն հսկողութիւնն որ աղօտա մտնեն յափշակողներն ու ճանկեն օրսեր խումբ խումբ մի։

Պ. Արծրունի զու քաջ զիւես, որ խարելն ամօթ չէ մոլութիւն չէ, այլ խարելն է վատութիւն և մալութիւն։ Սոլոմոնն անգամ խարեցաւ պատմութեան և կրօնի տեղեկութիւն շունենալովդ իրաւեցար Ամիւսանեանցի կակուղ լիզուին և Ժիզութիւննեանց նօրա լարած որոգայթի մէջ ընկար, եմէ յամափք ու չխռոտովանիք թէ ի-ի-եւ էն, շարունակէք կրկին Ամբրիսանեանցի և Ըմբռիսեցի բողոքականաց բերան և փաստարան լինելու պաշտօնդ, հաւատացէք որ Հայ եկեղեցին մեծ կորուստ կը համարի ձեզ պէս մի աղատամիտ, հայսէր գործունեաց Հայ,

յարգելի անձնութերութիւն Հայք եկեղեցու անզամանէցութիւնից յափելը տակած տեսնելով պիտի ցաւի այնքան որքան ցաւեցաւ պապականութիւնը գեր Հ. Ա. Օրմանեանի Հայ եկեղեցու ծոց զիմելու վերաբէ Եսկ ող Մելիքագելի համար թեսաւ չեմք ցաւում ։ Նա վաճառուկան մարդ է իւր ապրանքն այսինքն իւր ժողովրդական ճարտար զբիչն իւր երազնեն ու գուշակութիւններն սկսով ծախումք իւր զբանն իւր ներքին համեզ ման հակառակ էլ լինիւ նա չի հօգում ։ վիճակահամեն — ՖԷԼՃԻ զրբացին ալ աւելի փող տայ նորան աւելի լաւ ազագայ ու բաղդ է զուշաւ կում ։ թէ Հրեայ Ռուսական նորան երազի կրտայ մի քարեւ տայ որ Մելիքագելին նա իսկոյն կատելձէ մի հերոս Առաքեա նորան երազի կրտայ մի քանի տարուց յետոյ Մեսիայի գալուստ և Հրեայ վերանորոգութիւն իւշպէս երազեց որ Ամբրիսանեանցին հերոս Արգանի երազով 200 տարուց յետոյ Հայ եկեղեցու լուստերապականութիւնն ։

Պ. Արծրունի իմաստաօիրէ Հայոց անցեալն և ոլիտի համոզւես որ արզարե Հայ եկեղեցին և ազգութիւն իսկզբանէ անտի միացած մի խմոր է առանց Հայ եկեղեցու Հայ անուն չես զտնիլ պատմութեան մէջ \*). թէ «Մեզուի հետ ոմ ունիս ուրիշ բանի մէջ հակառակիր նա թէ առում ձիւն և մածուն սպիտակ են զու մի պնդիր թէ սև են նորա ասածով չէ որ սպիտակ է սպիտակութիւն մածնի և ձեան յատկութիւնն է նորա առածով չէ որ Հայ եկեղեցին և ազգութիւն մի զանգուած է այլ Հայ եկեղեցու և ազգութեան առնչակցութեամբ միութիւն նորա յատկութիւն է զարձել և 1800 տարուց ի վեր տարրացել է ևլ որոշել առանձին գաղափար կազմել անկարելի է զրչէ և խելքի չը մի տար համոզիր որ Արծրունի որ Լուտերական Պապական Պորտերական Յունական Մահմետական գաւանութեանց զիմոզ Հայեր թէ կամենան ևս Հայ անուն կրել նորանց զրկողներն ու նորանց յափշտակողները չեն ներսում այդ անունը կրելու և զիմոզներն էլ արդեն զզ ումեն Հայ անունից ուրեմն նորանց Հայ ազգութեան և Հայ եկեղեցու անզամ կարելի չէ համարել և իրանք էլ չեն ցանկանում ՀԱՅ կոչւել թէ կամիս փորձիր թիւրբացած Հայ եպիսկոպոս եմին եփենդուն Հայ կանչէ բողոքական սարկաւագ Սիմոնին Հայ կանչէ Հովհիւեանցին Հայ կանչէ կոտանաս նոցանից պատասխան — Հայհոյանը Հայութեան Երբեմն մտաղիր էիր Հայաստան ճանապարհորդել երբ բարով խէրով կատարես այն խոստումն պիտի համոզւես որ արդարե Հայ եկեղեցուց դուրս Հայ չկայ Հայտաստանի մէջ մի Հաւատար թէ տղիտութիւնն է նորանց սսիպում ասել թէ մեք Հայ չենք բնք ի-բնէի ենք և հ-հ-ե-ր-ո-ւ-ն-ենք հոռու ենք ի-բ-ր-ո-ւ ենք այլ տարրացած գաղափարը և ազգաց շահն այնպէս է պահանջում նոր մի Ասորի լրազրապետ քեզ ստիպէ թողուլ Հայ անուն և մլրտէ Ասորի ա-

(\*) Քիսառասից առաջ եւս չափ ազգ համարում մէին միացն Հայ կրօն ընդունազնեցն Առաջաձագիրը կամ

նունազ, ասիլով թէ Արծրունիք Անորի ծագումն ունին զաւէ Աստղի եւ,  
ի՞նչ պատասխան կը տպաս կը թաղուապ հայութիւնդ ու բնաւահնեց քո  
շափով ջամիկ ուրիշ զաւանութեանց և ազգութեանց դիմողներին Բնա-  
կան որենք է դարձել ազգաց բաղադրիչներ մասներն մի ազգ համարել թէ կողէտ վեցով տարբեր լինին Ապօղեա հայութիւնից զուրս համարել  
Արքանեան, Բնաւահն բնաւահն Ապօղեանեան երբ քանդեա մարմինի բաղա-  
զրով մասները կը քանչի և մարմինը այս Տչմարտութիւն զիտէ հարուն  
զիտէ Ասմար Քօլն զիտէ Ամիրխանեանցն պարտաւոր է զիտնալ և ազ  
Արծրունին որ չիմարէի հայ անունով զիմարկաւորների ժիզութիւննից  
չպործէ չքարողէ հակառակ Հայ եկեղեցու և ազգութեան թող ընդու-  
նի ար Հայ եկեղեցին և ազգութիւն մի էր մի է մի պիտի մնայ եթէ  
կամենում պահէլ իւր դոյութիւնն\* յւարդ ուղարկու միայն միաւունաւութիւն

## Ա Յ Գ Ա Ն Ն Ե Հ Ա Ր Ա Ջ

զու զու ուն բանահ համա և մասնաւ բանա Ֆլուուսունի միաւութիւն ։  
և զուն մա հարութիւն մասնաւ մասնաւ ուրա և մասնաւ լու մասն  
էն ։ (\* Սև ճամփանուու մասնաւ մասնաւ ուրա մասնաւ լու մասնաւ  
մասնաւ մա ու ուրա ուրա սև ճամփանուու մա ճամփանուու ուրա ու ուրա մա-  
սնաւ մասնաւ ու ուրա ուրա մա ճամփանուու մասնաւ և մասն  
ուրա ։ և մա մա ուրա ուրա մա ճամփանուու մասնաւ ու մասնաւ ուրա ու մասնաւ ուրա ։

Ես կցանկայի որ ամեն Հայեր  
Այսին հարաւան կառւածներ տէր,  
և բնդղաւարեած որունի, զաւակով  
Ապրէն ուրախ ։ Արշանիկ պիտնով։

Ես կցանկայի, որ ամեն երկրի  
Կաւանդիսաներ եւ հրապարակներ  
Լցմէն միշտ նայ գաճառ ականի  
Արդիւնաքերած առաւ ապրանքներ  
Ես կցանկայի, որ ամեն Հայեր  
Այնին ուսնալ եւ բաջ լիզմագէտ,  
Եւ նոցա բարձր հանմարի վիրոյ  
Ցարդաննով խօսէր ամրոց Եւրոպա։

Ես կցանկայի, որ ամեն երկրում  
Հայերի արհեստ եւ մարտարութիւն  
Հայերի արհեստ եւ մարտարութիւն  
Հայութ որդ լերանդաւանե մաս  
Են ան  
Են ան  
Են ան  
Են ան  
Են ան ան

Օտար ազգաց հնա մրցիրմ ազնատ,

Գերազանցութեան առներ մրցանալ-

Ես կցանկայի, որ ամեն Հայեր

Եմնին զօրեզ, բաջ եւ անզիներ:

Եւ նոցա հումկու բազիր հարաւածից

Սարսէն նոցա ամեն սովոններ:

Բայց ամենից շատ ես կցանկայի,

Որ ամեն մի Հայ ուսենաք անկեղծ

Մէր զէպի իւր Աղջու ու Եկեղեցի,

Եւ պիտի պաշտէր նոցա ոչ խօսրով:

Այլ սրանգ, հոգեվ,

Կինդանի վարձրով:

Ա Պ Վ

(\*) Հայ կրօնի եւ ազգի միութեան հարցը պարզերու դիտաւորութեամբ կը տպւի  
Արքանում և Ընդգիմախասութիւն վարդանայ եւ Վասակայ անունով մի ընդու-  
թակ յօդնածութիւն